

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻԳ. ՏԱՐԻ 2009

### ՅՈՒՆԱՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆԻՆ ԱՆՑԱԾ ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

#### Սիլվա Պապիկեան

Հայերէնի՝ յունարէնից կատարուած փոխառութիւնների հարցով զբաղուել են շատ հետազոտողներ՝ Հ. Հիւբշման, Ա. Մէյ-յէ, Հ. Թուժը, Հ. Աճառեան, Գ. Զահուկեան եւ ուրիշներ:

Հ. Աճառեանը, յենուելով իր «Հայերէն արմատական բառարանի» տուեալների վրայ, յունարէնից հայերէնին անցած բառերի ցանկում ընդգրկում է 1066 բառ. ընդ որում, այդ բառերից 151-ը լատինական ծագում ունեն եւ հայերէնին են անցել յունարէնի միջնորդութեամբ<sup>1</sup>:

Ակադ. Գ. Զահուկեանը նախագրային շրջանից յունարէնից հայերէնին անցած բառերի հնարաւոր թիւը համարում է 107, որոնց մէջ լատինական ծագում ունեցող բառերի քանակը՝ 12<sup>2</sup>: Գ. Զահուկեանը նախագրային հայերէնի համար առանձնացնում է հայ-յունական առնչութիւնների 4 շրջան՝

1. Վաղ առնչութիւններ՝ Բ.ա. 2-7 դդ.:

2. Յունական ազդեցութեան վաղ փուլ՝ Բ.ա. 9- Բ.յ. Ա դդ.

3. Հռոմի քաղաքական ազդեցութեան ուժեղացման եւ յունական մշակութային ազդեցութեան շարունակման փուլ՝ Բ.յ. Ա-Բ դդ.:

4. Բիւզանդական մշակութային եւ կրօնական ազդեցութեան փուլ՝ Բ.յ. 7 դարից<sup>3</sup>:

Յունարէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ յատկապէս նկատելի է դառնում Աստուածաշնչի թարգմանութեան հետ կապուած գործընթացում: Իհարկէ, Աստուածաշնչի թարգմանութիւնից առաջ էլ հայերը քաջածանօթ են եղել յունարէնին: Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքների հետեւանքով յունական քաղաքակրթութիւնը տարածուել է դէպի արեւելք: Բնականաբար, այն իր ազդեցութիւնն է թողել հայկական մշակոյթի վրայ: Տիգրանակերտում եղել է յունական թատրոն, իսկ Տիգրանի որդին՝ Արտաւազդ Երկրորդը (Բ.ա.

1 Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, (այսուհետեւ՝ ՀԼՊ), Երեւան, հտ. Բ, 1951, էջ 5-53:

2 Գ. Բ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 617:

3 Նոյն տեղում, էջ 616:

Բ դար) գրել է յունարէն ողբերգութիւններ:

Այդ մասին վկայում է յոյն մեծ պատմագիր Պլուտարքոսը (Ք.ա. Ա դ.): Նա իր «Զուգակշիռք» աշխատութեան մէջ տեղեկացնում է, որ Հայոց թագաւոր Արտաւազդը «հեղինակ է ողբերգութիւններու, գրած է ճառեր եւ պատմութեան հատորներ, որոնցմէ մասը մը մինչեւ այսօր կը մնայ»<sup>4</sup>:

Հ. Աճառեանը իր «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան մէջ գրում է. «Նախաքրիստոնէական շրջանում Հայերէնը յունարէնից ոչ մի ազդեցութիւն չի կրել, եւ Հայերը յոյներից ոչ մի բառ փոխ չեն առել (սլաւների նման) նախքան քրիստոնէութիւնը» (ՀԼՊ, 2, 7): Նոյն գրքի ժէ գլխում («Վիպասանական Հայերէն») բերում է վիպասանական Հայերէնում գործածուած բառերի քանակը (183), որոնց մէջ նաեւ յունարէնից փոխառեալ մարգարիտ բառը: Այդ մասին նա ինքն էլ գրում է. «Զարմանալի է, որ այդ հնագոյն ժամանակից ունինք նաեւ մի յունական փոխառեալ բառ (մարգարիտ), որ լեզուի պատմութեան հետ համաձայնեցնելու համար պէտք է համարել աւելի հոռմէական փոխառութիւն, քանի որ լատինական margarita margaritum ձեւերը դեռ Կիկերոնի եւ Տակիտոսի ժամանակից գործածական են»<sup>5</sup>:

Յունարէնից կատարուած փոխառութիւնների մէջ որոշակի քանակ են կազմում կրօնական տերմինները: Գրերի գիւտից անմիջապէս յետոյ թարգմանում են Աստուածաշունչը եւ կրօնադաւանաբանական բնոյթի բազմաթիւ գործեր ու մեկնութիւններ: Բնականաբար, այդ ընթացքում էլ փոխառում են շատ բառեր ու

արտայայտութիւններ, որոնց մի մասը ամբողջապէս է լեզուում:

Ահա թէ ինչ է գրում Ա. Մէյէն. «Հայերի քրիստոնէական բառային կազմի հին ֆոնդը բացատրելու համար անհրաժեշտ է իմանալ այն լեզուները, որ իրանական երկրի հիւսիսում խօսում էին Արշակունեաց ժամանակաշրջանի քրիստոնէաները: Այդ ժամանակ կը տեսնենք անկասկած, թէ որտեղից են գալիս այնպիսի խորհրդաւոր բառեր, ինչպիսիք են սարկաւազ, վարդապետ, կարապետ, մկրտել, գատիկ եւ թէ ինչպէս է բացատրուում իրենց ծագմամբ յունարէն այնպիսի բառերի ձեւը, ինչպիսիք են եկեղեցի կամ հեթանոս»<sup>6</sup>:

Գ. Բ. Զահուկեանի՝ նախադրային շրջանից յունարէնից Հայերէնին անցած փոխառութիւնների մէջ (107) առանձնացրել ենք կրօնական բնոյթի հետեւեալ բառերը՝

- Աբբա - Հայր, երկնաւոր Հայր՝ աստուած, աբբահայր, վանահայր. յուն. αββα (ς)
- Աղաբողոք - վերարկու, կրօնաւորի կարծ փիլոն. յուն. αναβολη
- Արքեպիսկոպոս - յուն. αρχιεπισκοπος
- Բեմ - յուն. βημα
- Եկեղեցի - ժողովուրդ, բազմութիւն, հաւաքոյթ, տաճար. յուն. εκκλησια
- Եպիսկոպոս - յուն. επισκοπος
- Կաթողիկէ - ընդհանրական (թուղթ, եկեղեցի). յուն. καθολικη
- Կաթողիկոս - Հայրապետ, Հազարապետ. յուն. καθολικος
- Կանոն - յուն. κανον
- Կիրակէ - տերունական օր, կիրակի. յուն. κυριακη
- Կղերիկոս - կրօնաւոր. յուն. κληρικος
- Կղերք - հոգեւորականութիւն. յուն. κληρος

4 Պլուտարքոս, Զուգակշիռք (թրգմ. Եղիա Թովմաճեան), հտ. Դ, 1894, էջ 1381:  
5 Հ. Աճառեան, Աշ. աշխ. էջ 75:

6 Ա. Մէյէ, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1978, էջ 221:

- Հերետիկոս - յուն. αρετικος
- Մատուոն - վկայարան. յուն. μαρτυριον
- Մարտիրոս - նահատակ. յուն. μαρτυρος
- Որթողոքս - ուղղափառ. յուն. ορθοδοξος
- Պենտեկոստէ - հրէաների՝ եգիպտոսից ելնելու յիսուներորդ օրը, հոգեգալուստ. յուն. πεντηχοστη
- Սաղմոս - յուն. ψαλμος
- Տարտարոս - դժոխք, ստորերկրեայ աշխարհ. յուն. ταρταρος
- Փիլոն - անթեւ վերարկու. յուն. φελουης
- Քղամիդ - պատմուճան. յուն. χλαμυς
- Քրիստոն(եայ) - յուն. Χριστος, Հայց. -օւ.<sup>7</sup>

Որոշ վերապահումով (քղամիդ, փիլոն) այդ բառերի թիւը կարելի է համարել 29:

Լ. Յովհաննիսեանը «Գրաբարի բառապաշարը (5-րդ դ.)» աշխատութեան մէջ ներկայացնում է հինգերորդ դարում վկայուած յունական փոխառութիւնների ցանկ, որն ընդգրկում է 293 բառ<sup>8</sup>: Այդ ցանկից նա առանձնացրել է քրիստոնէական-եկեղեցական բառաշարին վերաբերող հետեւեալ բառերը՝ աբբա(ւ), ալումիտ, անագանոս, անտիքրիստոս, արքեպիսկոպոս, եկեղեցի, եկեղեցիապետ, եպիսկոպոս, Էնկոմիա, կաթարոս, կաթողիկ, կաթողիկէ, կանոն, կղեր, հերետիկոս, հերետիկոս, դետիկոն, մարտիրոս, մետրապոլիտ, որթողոքս, պենտեկոստէ, պերոնագելիոն, պոսիտմէ, սաղմոս, սիբիղա, սպուդէա, փսաղտ, քորեպիսկոպոս (29 բառ):

Ըստ Հ. Աճառեանի՝ յունական փոխառութիւնների մէջ կրօնաեկեղեցական բառաշարին պատկանում է 89 բառ, որոնցից 55-ը քրիստոնէական են, իսկ 34-ը վերաբերում է եկեղեցական պաշտօնէութեանը: Աճառեանի ցանկում ընդգրկուած են ոչ

միայն հինհայերէնեան (գրաբարեան), այլեւ միջինհայերէնեան եւ աշխարհաբարեան բառեր: Ներկայացնենք այդ ցանկը եւ տեսնենք, թէ ինչպիսի փոփոխութիւններ են կրել այդ բառերը պատմական զարգացման ընթացքում:

1. Քրիստոնէական - ազապ, անաթեմայ, անգեղոս, անտիմիս, ապոստոլոս, անտիքրիստոս, արիէ, բորքորիանոս, դեսպոս, դիաթիկ, դոմետիկոս, եկեղեցի, եկեղեցիապետ, իկոն, լիթամիա, կաթարոս, կաթողիկէ, կանոն, կերոն, կիրելիւտոն, կոնդակ, հեմետիկոն, հերետիկոս, հերետիկոս, մակարի, մարտիրոս, մարտիրոզոգ, միտոն, ողոգոմեան, որդուկ, որթողոքս, պառակաւտոս, պառաւաւտոս, պենտեկոստէ, պերիտոմել, պերովեմգեղիոն, պոսուտթեոս, պոսիտմէ, պրոմիագմեանոս, սիւնբոլոն, սիկիրիէ, սկետիմ, սոփիա ոթիւ, սքեմ, տաքտիկոն, տելետի, տետրասկեզ, տիփտիկոն, փասեակ, փսալմոս, քրիայ, քրիստիանոս, քրիստոնեայ, օրթի (55 բառ):

2. Եկեղեցական պաշտօնէութիւն - աբբա, ալումիտ, անագանոս, ապոկրիսիար, արմի, արշի, արքեպիսկոպոս, արքերէց, արքիդիակոն, արքիմանտրիտ, դիակոն, եկեղեցիապետ, եկեղեցիապետ, եպիսկոպոս, ետիէս, իւպոդիակոն, խարտափիլակ, կաթողիկոս, կատիշտիտ, կղեր, մետրապոլիտ, մոնոզոն, մոնաքոս, պապ, սաղմոսողոգ, սեմգելոս, սպուդ(եայ), պապաս, պատրիարք, պերետուտ, պոտոսպապ, պոտոսֆրոնտէս, փիրիսկոպոս, փսաղտ, քորեպիսկոպոս (33 բառ):

Ընդհանրապէս յունական փոխառութիւնների՝ Հայերէնի բառապաշարին մերուելու աստիճանն աւելի փոքր է, քան իրանական եւ սեմական փոխառութիւններինը: Սակայն յունական հին փոխառութիւնների մէջ զգալի թիւ են կազմում այն բառերը, որ շարունակում են իրենց գործածութիւնը: Ընդ որում, այդ բառերի մեծ մասը վերաբերում է քրիստոնէական-եկեղեցական բառաշարին:

7 Գ. Բ. Զահուկեան, Աշ. աշխ., էջ 617-620:  
8 Լ. Շ. Յովհաննիսեան, Գրաբարի բառապաշարը (5-րդ դ.), Երեւան, 2006, էջ 97-101:

Ստորեւ կ'անդրադառնանք քրիստոնէական գաղափարախօսութեանը վերաբերող բառերին: Այս բառերի մեծ մասը քիչ յաճախական է, հայ մատենագրութեան մէջ գործածուել է մէկ կամ մի քանի անգամ, բառակազմօրէն ամուլ է, շատ բառերի դիմաց էլ կան դրանց հայերէն համարժէքները, որոնք աւելի գործածական են: Բառերի միւս մասն էլ մերուել է հայերէնի բառապաշարին, պատմական զարգացման ընթացքում կրել է իմաստային փոփոխութիւններ եւ դարձել հայերէնի բառապաշարի անկապտելի մասը: (Իմաստափոխութեան ենթարկուած բառերին կ'անդրադառնանք առանձին):

Անաթեմայ (անաթեմա) - փոխառութիւն է յուն. *αναθεμα* բառից (յունարէն *ανα* - վրայ եւ *θεμα* - դրուած բան բառերից). նշանակում է անէծք, նզովք, բանադրանք: Հին յունարէնում բառը բազմիմաստ էր եւ պատկանում էր բանաստեղծական մասնաշերտին<sup>9</sup>: Այս արմատից հայերէնում կազմուել է անաթեմայել բայը՝ անիծել, նզովել, բանադրել նշանակութեամբ: Հայերէնում քիչ գործածական է եղել: ՆՀԲ-ն նշում է Մաշտ. Կանոն. եւ Ճառքնտիրը:

Անգեղոս - յուն. *αγγελος* բառից փոխառեալ՝ հրեշտակ, պատգամատուր նշանակութեամբ: Յունարէնից է փոխառուած նաեւ լատիներէն *angelus* բառը՝ նոյն նշանակութեամբ: Բառը կայ միայն Երեմիա Մեղրեցու բառարանում՝ սպասատու կամ հրեշտակ նշանակութեամբ<sup>10</sup>: ՆՀԲ-ում բառն արձանագրուած չէ: Ըստ Աճառեանի՝ Մեղրեցուց են օգտուել ՀՀԲ-ն եւ ՓԲ-ն (Գ. Փէշտրմալճեան, Բառգիրք հայկազեան լեզուի. Պոլիս 1844 թ.): Այս արմատից է

կազմուած Աղաթանգեղոս (*Αγαθαγγελος*) յատուկ անունը՝ բարի հրեշտակ նշանակութեամբ:

Անտիմիս - այս բառը աւելի ուշ շրջանի փոխառութիւն է: ՆՀԲ-ում արձանագրուած չէ: Գործածուած է մէկ անգամ (Պտրգ, 540), «Սարկաւազն քարոզէ եւ սիւսէ զանտի միսն»: Միւս խմբագրութիւններում գործածուած է խորան բառը՝ «Սարկաւազն քարոզէ առ դուռն խորանին»<sup>11</sup>: Բառը ստուգաբանել է Հ. Աճառեանը: Այն նոր յունարէն *αντιμιησιον* կամ *αντιμινσιον* բառի փոխառութիւնն է, որ նշանակում է շարժական խորան<sup>12</sup>:

Ապոստոլոս - փոխառութիւն է յուն. *απο-στολος* բառից, որ նշանակում է պատգամատուր, առաքել: Փոխառութեամբ անցել է լատիներէնին, ապա՝ եւրոպական շատ լեզուներին: Հայերէնում գործածական է դրա հայերէն համանշանակը՝ առաքելաբառը: Ապոստոլոս բառն արձանագրուած է Երեմիա Մեղրեցու բառարանում՝ ապոստոլոս ձեւով՝ առաքել կամ պատգամատուր նշանակութեամբ<sup>13</sup>:

Ապոստոլոս բառի ստուգաբանութիւնը տուել է Հ. Աճառեանը<sup>14</sup>: Այն ծագում է յունարէն *απο-στολλω* ուղարկել բայից: Հայերէն առաքելաբառը նոյնպէս կապուած է ուղարկել բայի հետ (հմտ. առաքել՝ կազմուած առ մասնիկով եւ աք՝ «ոտք» արմատով): Աք-ել՝ ուղարկել բայը կենդանի է միայն Զէյթունի բարբառում (տե՛ս ՀՀԲԲ, 1, 140):

Անտիքրիստոս - յուն. *αντιχριστος* - Քրիստոսին հակառակ, սուտ Քրիստոս, Նեո: Բառն առաջին անգամ հանդիպում է Յով-

11 Սրբազան պատարագամատոյցը Հայոց, Յ. Գաթրճեան եւ Տաշեան, (այսուհետեւ՝ Պտրգ), Վիեննա, 1897, էջ 515:  
 12 Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. Ա, էջ 212:  
 13 Երեմիա Մեղրեցի, նոյն տեղում, էջ 29:  
 14 Հ. Աճառեան, նոյն տեղում, էջ 237:

9 Древнереческо-русский словарь. (այսուհետեւ՝ ДГРС), Москва, 1958, стр. 116.  
 10 Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ալիկոնա, 1698, վերահրատարակությունը տե՛ս Երեմեան, 1975, էջ 19:

հան Ոսկեբերանի մօտ, այսինքն՝ այն ոսկեգարեան շրջանից է՝ «Յեռ Քրիստոսի անտիքրիստոսն, այսինքն է նեռն, հակառակ Քրիստոսի» (Ոսկ. մ.բ.) (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի):

Արիւ - յունարէն *Αρειε* (Արիոս)<sup>15</sup> յատուկ անունից փոխառեալ: Հայերէնում գործածուած է մէկ անգամ Տիմոթէոս Կուզ եպիսկոպոսապետի մօտ՝ ո՛վ հերձուածող նշանակութեամբ: Մինչդեռ ե՛ւ Արիոս յատուկ անունը, ե՛ւ դրանից կազմուած բառերը գործածական են հին հայերէնում՝ արիոսաբար (Արիոսի նման), արիոսակաւ, արիոսեան (Արիոսին պատկանող, Արիոսին հետեւող), արիոսաւալ (արիոսական դառնալ), արիոսութիւն (արիոսական աղանդ: Օրինակ՝ «...որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս այս Արիոս ի գարչելիսն ընկալաւ զսատակումն»<sup>16</sup>, «...մատուցեալ առ նա ոմանց/ի հերձուածողաց աղանդոյն Արիոսի»<sup>17</sup>:

Հինգերորդ դարի մեր դպրութիւնից եւ եկեղեցու ընդհանուր պատմութիւնից յայտնի է, որ թէ՛ Հայաստանում, թէ՛ միւս երկրներում քրիստոնէութեան մուտքից յետոյ ստեղծուած են կրօնական տարբեր աղանդներ, որոնք հակադրուած են պաշտօնական եկեղեցուն: Դրանցից մէկն էլ արիոսականութիւնն էր:

Բորբորիանոս - յուն. *βορβοριανος* բառից փոխառեալ: Քրիստոնէական աղանդ է: Հայերէնում հանդէս է գալիս

տարբերակներով՝ բորբորիտ(ոն) եւ բարբարիանոս: Յունարէնում *βορβορος* բառն ունի հազուադէպ նշումը (ΔΓРС, 301): Նշանակում էր կեղտ, անմաքրութիւն: Հայերէնում բորբորիտ (բորբորիտոն) բառն ստացել է նաեւ պիղծ, վաւաշ, ցանկաւեր իմաստները: Համարեա նոյն իմաստն է տալիս նաեւ ԱԲ-ն՝ տղմատեր, գարշելի, վաւաշոտ: Օրինակներ մեր մատենագրութիւնից.

«Բայց վաւաշն այն եւ բորբորիտն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել»<sup>18</sup>: «Հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. եւ աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանեցուցանել, կամ հալածել ի քումմէ վիճակէդ»<sup>19</sup>:

Իրականում այդ աղանդը կոչուած էր *βορβοριται* (բորբորիտոն աղանդաւորներ): Աղանդի հակառակորդները բառախաղով այն կապել են յունարէն *βρβορος* ցեխ, տիղմ բառերին (Հիւբըման, 344): Այս աղանդի ներկայացուցիչները աչքի են ընկել իրենց անբարոյական վարքով, չեն ճանաչել որեւէ բարոյական օրէնք, ունեցել են բազմաթիւ պարականոն գրքեր: Հայոց կաթողիկոսը նրանց վտարել է Հայաստանից 415-423 թթ.:

Դեսպոտ - յունարէն *δεσποτης* բառից փոխառեալ: Յունարէնում ունէր հետեւեալ նշանակութիւնները՝

1. պարոն, տանուտէր, սեփականատէր.
2. եպիսկոպոսին եւ քահանային տրուած պատուանուն:

Այս բառը տրուած է միայն Զախըախեանի բառարանում<sup>20</sup> առանց վկայութեան:

18 Նոյն տեղում, էջ 48:  
 19 Նոյն տեղում, էջ 336:  
 20 Մ. Զախըախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837:

15 Արիոսը ալեքսանդրիացի քահանայ էր, որ չէր ընդունում քրիստոնէական պաշտօնական եկեղեցու հիմնական դոգման՝ Հայր Աստծոյ եւ Որդի Աստծոյ միագոյ էութիւնը: 325 թ. Նիկիայի, ապա 381 թ. Կ. Պոլսի տիեզերական ժողովներում արիոսականութիւնը համարուեց հերետիկոսութիւն: Նիկիայի ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսատրչի որդի՝ Արիստակէս եպիսկոպոսը:  
 16 Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 239:  
 17 Նոյն տեղում, էջ 294:

Դիաթիկ (տիաթիկ) - փոխառութիւն է յունարէն *διαθηχη* բառից: Յունարէնում բառը բազմիմաստ էր եւ ունէր հետեւեալ նշանակութիւնները՝

- 1. տրամադրութիւն, կտակ, համաձայնագիր.
- 2. Հին եւ Նոր կտակարան (ՃԲՐԸ, 369):

Հայերէնում դիաթիկ բառը գործածուած է Ասորական դատաստանագրքում<sup>21</sup> եւ Մխիթար Գօշի Դատաստանագրքում<sup>22</sup>: Օրինակ՝ «ի գրելն զդիաթիկն» կամ «իշխանութիւն ունի առնել դիաթիկ» (Մխ. դտ.) (օրինակներն՝ ըստ ՆՀԲ-ի):

Հայերէնում յունարէն բառի «Հին եւ Նոր կտակարան» նշանակութիւնը գործածական չի եղել: Այդ են վկայում նաեւ վերոյիշեալ օրինակները:

Դիաթիկ բառը ունեցել է կտակ իմաստը, որն էլ արձանագրում է Ստ. Մալխասեանցը<sup>23</sup>:

Եկղեսիաստէս (եկլիեսիաստէս, եկլիէսիաստէս, եկլիեսիաստէս) - յունարէն *ΕΚΚΛΕΣΙΑΣΤΗΣ* բառն է: Յունարէնում նշանակում էր՝

- 1. ժողովրդական հաւաքի անդամ.
- 2. ժողովրդական հաւաքի հոգևոր (ՃԲՐԸ, 486):

ՆՀԲ-ն բացատրում է «եկեղեցուցիչ, ժողովող, ատենախօս, վարդապետ»: Հայն իմաստով այս բառով անուանում է Սողոմոն Իմաստունի գիրքը, որ կոչւում է նաեւ ժողովող («ժողովող» գիրքը Սողոմոնը գրել է ծեր հասակում. այն խորհրդածու-

21 Ասորական դատաստանագիրք, (Ռրտ. Ա. վրդ. Ղլտեանց), Լճմիածին, 1917:  
 22 Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց (Ռրտ. Վ. ծ. վրդ. Բաստամեան), Վաղարշապատ 1880:  
 23 Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՀԲԲ), Երեւան, Ռտ. 1, 1944, էջ 516:

թիւն է երջանկութեան մասին), երբեմն էլ անուանում են Երգ երգոցը («Երգ երգոցը»), որը Սողոմոնը գրել է պատանեկան հասակում: Հարսի եւ փեսայի երկխօսութիւնների ձեւի մէջ առնուած այս բանաստեղծութիւններում այլաբանօրէն նկարագրում է Քրիստոս-եկեղեցի շնորհական միութիւնը եւ բարձրագոյն մարգարէութիւնն է Մեսիայի մասին (ԲՀ, 110):

Եկղեսիաստէս տիտղոսը տրուել է Սողոմոն Իմաստունին՝ «Ահա զայս ամենայն գտի, ասէ եկղեսիաստէս. մի միող գտանել խորհուրդս» (Ժող., է 28): Աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Ահա այս բոլորը գտայ,- ասում է ժողովողը,- մէկ առ մէկ հաշուելով՝ գտնելու համար խորհուրդները»<sup>24</sup>:

ԱԲ-ի բացատրութեամբ՝ «1. Ժողովող, ատենախօս, վարդապետ: 2. Ժողովող գիրքը, եւս Երգ երգոցը»: Միջին Հայերէնում հանդիպում է եկլեսիաստէս ձեւով՝ քարոզիչ նշանակութեամբ՝ (ՄՀԲ, 190): Օրինակ՝ «Զոր յետոյ մեծ վարդապետն մեր քաջ եկլեսաստէսն Հայոց Գրիգոր Մերենց ... ժողովեաց յամենայն պատմութեանց» (Ժէ դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն Բ, Երեւան, 1958, էջ 203-204):

Եկղեսիաստիկոս (եկլեսիաստիկոս, եկլիէսիաստիկոս) - փոխառութիւն է յունարէն *ΕΚΚΛΗΣΙΑΣΤΙΚΟΣ* բառից: Յունարէնում նշանակում էր՝ «ժողովրդական հաւաքին մասնակցող, ժողովրդական հաւաքին մասնակցողների ձայները» (ԺԹՀՀ, 486): Ըստ ՆՀԲ-ի՝ «եկեղեցական, ժողովական, մանաւանդ իբր անուն պատուոյ բարունապետաց առ յոյնս» (ՆՀԲ, 651): Յոյները այս անուանումով պատուել են Մեսրոպ Մաշտոցին՝ «Ջառաքեալս ի քէն զՄեսրոպ

24 Աստուածաշունչ մատենա Ռիմ եւ Ար կտակարանների, Մայր Աթոռ Ս. Լճմիածին, 1999 (արեւելահայերէն Ար թարգմանութիւն):

ձեռնադրեցաք լինել եկլեսիաստիկոս» (Խորենացի, Գ, 57):

Էնկոմիա - այս բառը յունարէն *ΕΥΚΩΜΙΟΝ* բառից է (լատիներէնն էլ փոխառել է յունարէնից): Նշանակում է Աերթողեան (ՀԱԲ, 2, 117): Բառը հինգերորդ դարից է: Գործածուած է ընդամէնը մէկ անգամ Փ. Բուզանդի մօտ՝ «Ասէին նմա էնկոմիա, որ ասի թէ Հոգի սուրբ հանգեալ ի սա» (Բուզանդ, 67): Աշխարհաբար թարգմանութեան մէջ նոյնպէս գործածուած է Էնկոմիա բառը՝ «Ապա նրան ձեռնադրեցին եւ բարձրացրին նստեցրին եպիսկոպոսութեան աթոռը եւ մեծարում էին, շատերն էլ նրան էնկոմիա էին ասում, այն մտքով, թէ Ս. Հոգին թառեց նրա վրայ»<sup>25</sup>:

Ոսօքը Ներսէս Մեծի մասին է, որ ձեռնադրուեց Եւսեբիոս արքեպիսկոպոսի կողմից, եւ աղանձին եկաւ նստեց Ներսէսի գլխին:

Իկոն - փոխառութիւն է յունարէն *ΕΙΚΩΝ* բառից: Յունարէնում ունէր պատկեր, կերպար, տեսիլք իմաստները (ՃԲՐԸ, 463): Ըստ Աճառեանի՝ «Յունաց եկեղեցական պատկեր» (ՀԱԲ, 289): Օրինակ՝ «Յամենայն սեղան բարձեալ էր խաչին պայծառութիւն եւ իկոնիւք զարդարեալ» (Օրբ. ՀԿճ. ԺԲ, 178):

ՆՀԲ-ն իկոն բառը տալիս է կոն ձեւով՝ բառասկզբի ի հնչիւնի անկումով:

Բառը յունարէնից փոխառութեամբ անցել է շատ լեզուների՝ ռուսերէնին, լեհերէնին, չեխերէնին<sup>26</sup>: Հայերէնում այս բառի փոխարէն գործածուած է սրբապատկեր բառը:

25 Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1968, էջ 127 (Ստ. Մալխասեանցի թարգմանութեամբ):

26 Ռուսերէնում *икона* բառը բացատրում է «Уверующий предмет поклонения — изображение бога, святого или святых в виде портрета в красках», (С. И. Ожегов, Словарь русского языка, Москва, 1970, стр. 240).

Լիթագիա - յունարէն *λιτανια* բառից փոխառեալ: Հին յունարէնում ունէր աղօթք իմաստը (ՃԲՐԸ, 1032): Հայերէնում քիչ գործածութիւն է ունեցել, ընդամէնը մի քանի անգամ (Գր. Տաթեւացի, Պատարագամատոյց): Այդ բառը փոխառուելու կարիք էլ չկար, քանի որ հայերէնում կար եղարից աւանդուած դրան համապատասխան աղօթք բառը: Լիթագիա բառը ՆՀԲ-ում չկայ:

Կաթարոս - յունարէն *καθαρός* բառից փոխառեալ, որ նշանակում էր մաքուր, սուրբ: Այս անուանումով իրենք իրենց կոչում էին նաւարեան աղանդաւորները: Գործածուած է Սեբերէոսի մօտ:

Կաթողիկէ - յունարէն *Καθολική* ընդհանրական բառից փոխառեալ: Հանդիպում է նաեւ կաթողիկէ, կաթալիկէ, կաթուիկէ տարբերակներով: Ինչպէս գրում է ՆՀԲ-ն՝ «սեպհականեալ մակղիր ընդհանուր եկեղեցւոյ Քրիստոսի»: Ասում է նաեւ «զնիւթական եկեղեցւոյ, այսինքն զտաճարէ, որ իցէ աթոռանիստ. մայր ժամ գմբէթով» (ՆՀԲ): Օրինակներ մեր մատենագրութիւնից՝

«...Հաւատարիմ էր սա ... Հաստատութեան ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն»<sup>27</sup>:

«Կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ»<sup>28</sup>:

«Եւ նոյն զարձեալ ի Կաթողիկէին իւրում ասէ»<sup>29</sup>:

Կաթողիկէ սովորաբար անուանում են աթոռանիստ, մայր եկեղեցիները: Օրինակ՝ «Այլ մեծն Սահակ, ոչ ինչ կասեայ զհոգեւոր կաթն դիեցուծանել մանկանց եկեղեցւոյ Հանդերձ Մեսրոպաւ, զոր թո-

27 Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 32:

28 Նոյն տեղում, էջ 65:

29 Պատմութիւն Սեբերէոսի, Երեւան, 2004, էջ 236:

ղեալ խարսխեաց յեկեղեցւոջն կաթողիկէ, որ ի Վաղարշապատ քաղաքի»<sup>30</sup>:

Միջին հայերէնում գործածական է եղել կաթողիկ ձեւը՝ գահագիստ, մայր եկեղեցի, կաթողիկէ նշանակութեամբ<sup>31</sup>: Օրինակ՝ «Որպէս թէ գումբէթ էր սարած՝ մեծ կաթողիկին», «Տաղ Տէր Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երեւան, 1960, համ. 5):

Կաթողիկէ բառով արդի հայերէնում անուանում են մայր եկեղեցիները: (Էջմիածնի մայր տաճարը կոչւում է կաթողիկէ): Մայր եկեղեցիներն ունէին գմբէթ, եւ հայ ճարտարապետութեան մէջ վեղարածեւ գմբէթ ունեցող եկեղեցիներն էլ կոչւում են կաթողիկէ («Կաթողիկէն շինուած է բուն հայկական ոճով», ՀԲԲ, 3, էջ 363):

Կաթողիկէի «մեծ, ընդհանրական» իմաստից են առաջացել կաթողիկոս (հոփուպետ), կաթողիկոսանալ, կաթողիկոսացու, կաթողիկոսանիստ, կաթողիկոսարան, կաթողիկոսութիւն տերմինները:

Կանոն - յունարէն ΚΑΝՈՆ բառից: Հին յունարէնում բառը բազմիմաստ էր, ունէր տասը իմաստ (ԱԴՐԸ, 873): Նրա առաջնային իմաստը եղեգնի ցողումն է, որից առաջացել են նրա միւս իմաստները՝ ձող, քանոն, սահմանագիծ, օրէնք, կրօնական օրէնք, աղիսակ:

Այս բառի իմաստներից մէկը՝ եկեղեցական օրէնք, պատկանում է կրօնական բառաչերտին:

ՆՀԲ-ն այս բառիմաստի համար տալիս է մի քանի նշանակութիւն՝

1. Սահմանեալ վճիռք ժողովոց, որց հաւաքումն կոչի Գիրք կանոնաց կամ Կանոնագիրք: Օրինակ՝ «Ժողովք ուղղափառ եպիսկոպոսաց կանոնս սահմանեցին եկե-

ղեցւոյ», «Հարքն մեր սուրբ եպիսկոպոսք սահմանեցին կանոնս»<sup>32</sup>:

2. Օրէնք աստուածային, եկեղեցական եւ քաղաքական: Օրինակ՝ «Այլ մեք ոչ եթէ յայնչափս ինչ պարծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին զոր բաժանեաց մեզ Աստուած ափով հասանել մինչեւ առ ձեզ»: (Բ. Կոր. Ժ 13): Աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Իսկ մենք պարծենում ենք ոչ թէ չափից դուրս, այլ ըստ չափի այն կանոնի, որը Աստուած մեզ բաժանեց, որպէսզի հասանք մինչեւ ձեզ»:

3. Գլխակարգութիւնք գրոց սաղմոսաց եւ շարականաց եւ կարգ պաշտամանց. «... ոչ հաւաստեալ հանդոյն էին կանոնի եւ վարդապետութեան ... կարգաւորութեամբ սրբոյ նահատակին Գրիգորի»<sup>33</sup>:

Ժամանակակից հայերէնի կրօնական տերմինահամակարգում նոյնպէս այս բառը բազմիմաստ է, նշանակում է՝

- 1. Այն ամէնը, ինչն ընդունուած է եկեղեցու կողմից.
- 2. Աստուածաշնչի՝ եկեղեցու կողմից ընդունուած ու վաւերացուած գրքերի ամբողջութիւնը («Կանոն Սուրբ Գրոց»).
- 3. Այն որոշումները, որոնք եկեղեցու հայրերը սահմանել են որպէս ուղիղ դաւանանք:

Կանոն են անուանում նաեւ սաղմոսների ութ բաժանումներից իւրաքանչիւրը եւ որեւէ տօնի համար սահմանուած շարականները (ԲՀ, 471):

Հին հայերէնում այս արմատից կազմուած բառերից կարող ենք նշել՝ կանոնաբար, կանոնագիր, կանոնագլուխ, կանոնագրեմ, կանոնագրութիւն, կանոնադիր, կանոնադրեմ, կանոնադրութիւն, կանոնական, կա-

30 Մ. Խորենացի, Աշ. աշխ., էջ 354:  
31 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, Երեւան, հտ. 1, 1987, էջ 375:

32 Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, 1826, էջ 287:  
33 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1904, էջ 28:

նոնափակ, կանոնեմ, կանոնադրումք, կանոնումն (13 բառ): Ստ. Մալխասեանցի բառարանում, այս բառերից բացի, վկայուած են հետեւեալ բառերը՝ կանոնագետ (եկեղեցական կանոնների հմուտ), կանոնագիտութիւն, կանոնագիրք (ՆՀԲ-ում չկայ), կանոնադրական, կանոնագանց, կանոնագանցութիւն, կանոնականութիւն, կանոնապահ, կանոնապահութիւն, կանոնատր, կանոնատրաբար, կանոնատրել, կանոնատրութիւն, կանոնատրումն, կանոնափակ (15 բառ):

Ինչպէս տեսնում ենք, բառակազմական տեսակէտից կանոն բառը զարգացում է ունեցել: ՆՀԲ-ում արձանագրուած 13 բառին աւելացել է եւս 15 բառ: Սա միանշանակ ցոյց է տալիս, որ կանոն բառը մերուել է հայերէնի բառապաշարին. այս արմատով կազմուած շատ բառեր գործածական են ոչ միայն կրօնաեկեղեցական բառապաշարում, այլեւ անցել են համագործածական բառաչերտին:

Կանոն<sup>34</sup> արմատից է կանոնիկոս բառը, որ նշանակում է կանոնատր: Հատին եկեղեցում պատուի տիտղոս է: Գրաբարում ունէր նաեւ «հոգեւորական, որ կառավարում է եկեղեցու գոյքը» նշանակութիւնը:

Կերոն - փոխառութիւն է յունարէն ΚΗΡΟΣ (հայց. ΚΗΡΟΝ) ձեւից: Հայերէնում թարգմանուել է մեղրամոմ: Բառը ՆՀԲ-ում արձանագրուած է: Մալխասեանցը այս բառը տալիս է կերոն ձեւով՝ «եկեղեցիներում գործածուող մեծ մոմ», իսկ Աղայեանի Ահբե-ում կերոն բառն ունի նաեւ ջահ իմաստը, եւ այս արմատից կազմուած են մի քանի բառեր՝ կերոնաթափօր (ջահագնացութիւն), կերոնակիր (ջահակիր), կերոնավաճառ:

Սովորաբար կերոն են կոչում աւետարան կարդալու կամ հանդէսների ժամանակ դպիր տղաների բռնած մոմերը:

Կիրելէսիոն (կիրելէսոն, կիրիլէսոն) յունարէն ΚΥΡΙΕ ΕΛΕΗΣΟΝ արտայայտութիւնից փոխառեալ, որ նշանակում է «Տէր, ողորմեա»: Գործածուած է «Վարք հարանց»-ում (Բ. ՕԳ):

Կոնդակ - յունարէն ΚΟΝΤΑΚΙΟΝ բառից, որ բառացի նշանակում էր գլանաձեւ ոլորուած թուղթ: Հայերէնում այն ունի «մազաղաթեայ թուղթ, գիր հայրապետական, գիր յիշատակաց, կտակ. գալարեալ գլանաձեւ» իմաստները (ՆՀԲ): Ստ. Մալխասեանցի բառարանում կոնդակ բառն ունի 5 իմաստ, որոնք հիմնականում պատկանում են կրօնական տերմինահամակարգին՝

- 1. Համառօտ հոգեւոր երգ, յորդորակ.
- 2. Հայրապետական պաշտօնական գրութիւն՝ գալարուող թղթի վրայ.
- 3. Նշանաւոր մենաստանի կողմից տրուած օրհնութեան թուղթ.
- 4. Շատ երկար նամակ (ծաղր.):

Ժամանակակից հայերէնում բառն ունի «կաթողիկոսի պաշտօնական գրութիւն» իմաստը (ԱՀԲԲ, 1, 755): Մինչեւ հիմայ էլ կոնդակին գլանաձեւ փաթոյթի ձեւ են տալիս, զարդարում մանրանկարներով եւ հայրապետական խորհրդանշանով: Կոնդակները բովանդակութեամբ տարբեր են լինում՝ ազգային, եկեղեցական, եկեղեցականներին պաշտօններ նշանակելու, պատժելու եւ այլն: Այս արմատից կազմուած են կոնդակագիր եւ կոնդակագիրք բառերը:

Հեցնետիկոն - յունարէն ΕΝΩΤΙΚΟΝ բառից փոխառեալ, որ յունարէնում նշանակում էր միացնող: Գործածուած է «հենետիկոն թուղթ» կապակցութեան մէջ: Այսպէս էր կոչուած Ջենոն Իսաւրացի կայսեր 482 թ. հրովարտակը, որով նա ցանկանում

34 Յունարէն κανων ձեւից է հայերէն քանոնը: Հ. Աճառեանի կարծիքով՝ այս ձեւը հայերէնին անցել է կա՛մ ասորերէնի, կա՛մ պահլաւերէն մի ձեւի միջնորդութեամբ (տե՛ս ՀԱԲ, էջ 552):



էր հաշտեցնել քաղկեդոնականներին ոչ քաղկեդոնականների հետ: Այս բառը գործածուած է Ստ. Օրբէլեանի «Պատմութիւն տանն Սիսական» գրքում. «Եւ զոր խնդրեմքս հեննետիկոն թղթովք ձեռնագրեալ, առնել ձեռնարկ հաստատուն եւ անխախտ կտակ միաբանութեամբ սուրբ եւ երջանիկ եպիսկոպոսացո եւ յուղարկել առ մեզ»<sup>35</sup>: «Հեննետիկոն թուղթ» նշանակում է «միացնող, միաւորող թուղթ»:

Հերետիկոս (հերետիկոս) - յունարէն *αἰρεσιωτής* բառից փոխառեալ, որ ծագում է *αἵρεσις* բառից (ԺԹՀՀ, 54): Հին յունարէնում բառը բազմիմաստ էր, եւ նրա իմաստներից մէկն էր աղանդ, հերձուած: Յունարէն բառը հայերէնում հանդիպում է միայն յոգնակի ձեւով՝ հերետիկոսք (հերետիկոսք), այսինքն՝ հերետիկոսներ, ինչպէս՝ «Մի հաղորդիւր ընդ հերետիկոսայն եւ ընդ հեթանոսս» (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի):

Հերետիկոս (եռետիկոս) - այս բառը ծագում է յունարէն *αἰρετικός*-ից: Այն իմաստով համընկնում է նախորդ բառի հետ: Ընդ որում, հերետիկոս բառը աւելի յաճախական է եւ շատ է հանդիպում, քան նախորդ՝ հերետիկոս բառը:

Հերետիկոս բառը մեր մատենագրութեան մէջ հանդիպում է հինգերորդ դարից: Օրինակներ՝ «Ողբացեն կամ ամաչեսցեն հերետիկոսք» (Մանգ. է) (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի), «...զի փիլիսոփայական արուեստին խնոյր արկանէր հանապազ զամենայն զուր բացեալ զբերանս հերետիկոսացն»<sup>36</sup>:

Հերետիկոս արմատից կազմուած էին հերետիկոսապետ եւ հերետիկոսութիւն բառերը: Օր.՝ «Զայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեանն հե-

րետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս»<sup>37</sup>:

Հերետիկոսապետ անուանում էին այն մարդուն, որը դաւանական շատ կարեւոր հարցերում տարբերում էր եկեղեցու հիմնական դաւանանքից (Արիոս, Նեստոր եւ ուրիշներ):

Հերետիկոսութիւն բառը, բացի կրօնական՝ «եկեղեցու ընդունած դաւանութեանը հակառակ դաւանութիւն» իմաստից, ունի նաեւ փոխաբերական «կարծիք, հայեացք, որ հակասում է ընդհանուր ընդունելութիւն գտած ուսմունքին, կարգերին» իմաստը: Ընդ որում, ժամանակակից հայերէնում այս բառի փոխաբերական իմաստը, կարծես, աւելի գործածական է:

Մակարի (մակար) - փոխառութիւն է յունարէն *μακάριος* բառից, որ նշանակում էր երանելի, երջանիկ (ԺԹՀՀ, 1046): Գործածուած է «Վարք սրբոց հարանց»-ում (1855, էջ 485):

Մարտիրոս (մարտիրոս) - յունարէն *μάρτυροσ* բառից: Հին յունարէնում ունէր վկայ, ապացոյց, ճգնատր, նահատակ իմաստները (ԺԹՀՀ, 1054):

ՆՀԲ-ն բառը բացատրում է. «Սեպհականեալ անուն սրբոց՝ որք հեղին արիւնս ի վկայութիւն ճշմարտութեան»: Ըստ Զահուկեանի՝ բառը հայերէնին անցել է նախազրային շրջանից (Զահուկեան, 619): Հետագայում այս բառը ձեռք է բերել նոր՝ «իր գաղափարների համար տանջանքներ կրող», «շատ չարչարանքներ կրող, կրած» իմաստները: Մարտիրոս հասարակ անունը բառիմաստի նեղացումով դարձել է յատուկ անուն: Այս արմատից են մարտիրոսաբար, մարտիրոսագրութիւն, մարտիրոսական, մարտիրոսակից, մարտիրոսայորդոր, մարտիրոսանալ, մարտիրոսարան, մարտիրոսաչոկ, մարտիրոսաւեր, մարտիրոսութի բա-

37 Նոյն տեղում, էջ 80:

35 Ստ. Օրբէլեան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկուա, 1861, էջ 337:

36 Փաւստոս Բուզանդացի, Աշխ., էջ 80:

ուերը: Բերենք օրինակներ մեր մատենագրութիւնից.

«...Զի մի գերեալ քանդեսցի աշխարհս, եւ սուրբ եկեղեցիքն անօրինեցին, եւ կամ մարտիրոսք անարգեսցին»<sup>38</sup>:

«Ի քարոզութենէն Թադէոսի Առաքելոյ եւ նորուն յելից եւ ի մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի եւ իւրոյ Հանգստեանն, ... այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան»<sup>39</sup>:

«Գտանի ... գրեալ յայլոց ... մարտիրոսանալ դստերն արքայի Սանդիստոյ հուպ ի ճանապարհն»<sup>40</sup>:

Մարտիրոս անուանումով կան բազմաթիւ տեղանուններ եւ սրբավայրեր Հայաստանի տարբեր շրջաններում՝ Մարտիրոս գիւղ Վայքի շրջանում, Մարտիրոս գետ (Մարտիրոս չայ)՝ գետակ Արաքսի աւազանում, Սհրբ Մարտիրոս՝ եկեղեցի Պարսկահայաստանում, Մարտիրոսաց վանք՝ Վայքի շրջանում՝ Մարտիրոս գիւղի մօտ, Մարտիրոսի անապատ՝ գտնուած էր Էրզրումի գաւառում, Մարտիրոս բաշի՝ լեռնագագաթ Վայքի լեռնաշղթայում, Մարտիրոսաց քաղաք՝ Մարտիրոսաց պոլիս, Մարտիրոսուպոլիս անուանումը տրուել է Տիգրանակերտին<sup>41</sup>:

Մարտիրողոգ - յունարէն *μαρτυρολόγιον* վկայաբանութիւն բառից՝ *μαρτυροσ* վկայ եւ *λόγος* խօսք բառերից կազմուած: ՆՀԲ-ն տալիս է մարտիրողէք/մարտիրողօք, մարտիրող տարբերակներով: Հայերէնում թարգմանուել է «վկայաբանութիւն, պատմութիւն մարտիրոսաց, յայսմաւուրք» (ՆՀԲ, 231): Օր.՝ «Առեալ բազում

38 Փաւստոս Բուզանդացի, Աշխ., էջ 23:

39 Նոյն տեղում, էջ 5:

40 Մ. Խորենացի, Աշխ., էջ 157:

41 Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Երեւան, 1991, հտ. 3, էջ 742:

գրեանս՝ տօնական, եւ մարտիրողէք» (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի):

Կրօնի համար կրած տառապանքների եւ սպանութիւնների նկարագրութիւնը կոչուում է վկայաբանութիւն:

Միստեղիոն - այս բառը ծագում է յունարէն *μυστηριον* գաղտնիք բառից: Բառը կապուած է կրօնակեղեցական տերմինահամակարգի հետ այնքանով, որքանով որ միջնադարում յայտնի է եկեղեցական ներկայացումների մի տեսակ՝ միստերիա անուանումով: Սրանք կատարուել են եկեղեցական հանդիսաւոր արարողութիւնների ժամանակ եւ պատարագների բաղկացուցիչ մաս են կազմել եւրոպական եկեղեցիներում:

Միտոն (միտոն, մետոն) - յունարէն *μύρον* բառից: Հին յունարէնում այն բազմիմաստ էր. ունէր «անուշահոտ բուսական իւղ», «անուշահոտութիւններ վաճառելու շուկայ» իմաստները (ԺԹՀՀ, 1116): Բառը Աստուածաշնչում թարգմանուած է իւղ:

«Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. զի բարի են ստինք քո քան զգինի, եւ հոտ իւղոց քոց քան զամենայն խոնկս. եւ զ անոյշ հեղեալ է անուն քո, վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ. եւ ձգեցին զքեզ զհետ հոտոյ իւղոց քոց ընթացուք մէք» (Երգ երգոց, 1, 2, 3): «Մունկք իմ տկարացան ի պահոց, եւ մարմին իմ այլագունաց յիւղոյ» (Սաղմ., ձԸ 24) (ընդգծումները մերն են - Ս. Պ.):

Միտոն (մետոն) բառը հայերէնում աւելի ուշ շրջանից է գործածուում (հաւանաբար՝ Ը դարից, Յովհաննէս Իմաստասէր Օձնեցու մօտ): Ժամանակակից հայերէնում աւելի գործածական է մետոն ձեւը: Հայերէնի բարբառներում հանդիպում են քոմոն, քոմբոն բառերը (նշանակում է չարածի, ստահակ), որը ծագում է քո մետոնը կապակցութիւնից՝ թերեւս առաջացած «քո մեռոնը երեսից գնացել է» դարձուածքից: Թրքախօս հայերի մէջ տարածուած է մե-

ոռնուով բառը՝ անմեղս, մահմեդական իմաստով՝ կազմուած թրքերէն *SUZ* բացասական մասնիկով: Ժողովուրդը մեռոնը սուրբ է համարել, որ երեւում է նաեւ դարձուածքներում, օր.՝ մեռոնը վկայ, երեսին մեռոն չկայ եւ այլն:

Մեռոն արմատից են կազմուած մեռոնակիր, մեռոնահան, մեռոնադիր, մեռոնահոտ, մեռոնաման, մեռոնաշիշ, մեռոնաշուր, մեռոնել, մեռոնեփէք, մեռոնօրհնէք (մեռոնօրհնութիւն), մեռոնուորուել (մեռոնաւորուել) բառերը: Վերջինս գործածուած է «չմեռամեռոնաւորուած» արտայայտութեան մէջ, որը, թւում է՝ հին քրիստոնէական սովորութիւն է, ըստ որի՝ մեռածներին մեռոնով օծում էին:

Ժամանակակից հայերէնում մեռոն բառով բաղադրուած համարեայ բոլոր բառերը պատկանում են կրօնական տերմինահամակարգին, ինչպէս՝ մեռոնակիր, մեռոնահան անել (մկրտութիւնից), մեռոնաման, մեռոնաշիշ, մեռոնաշուր, մեռոնեփէք, մեռոնօրհնէք եւ այլն:

Մեռոնը (միւռոն) պատրաստուած է կաթողիկոսի ձեռքով: Նրա հիմնական բաղադրանքը ձէթն է, որին խառնուած են տարբեր տեսակի հոտաւէտ խոնկեր, բոյսեր<sup>42</sup>:

Ողոգմեան (ողոգմեան, ողոգմե, ողոգում, դոմեան) - յունարէն *ευλογημένη* օրհնել, բարեբանել նշանակութեամբ: Կապուած է Քրիստոսի՝ Երուսաղէմ մուտք գործելու ժամանակ ժողովրդի ցնծութեամբ. «Ովսաննա, օրհնեալ է ան որ Տիրոջ անուանովը կուգայ» (Մարկ. ԺԱ, 9): ՆՀԲ-ն բա-

ցատրում է՝ «Ծաղկազարդ՝ օր արմաւենեաց եւ բարեբանութեան» (Եւ նա եկեալ յողոգումին, եւ ժամանեաց Ծաղկազարդին») (Գնձ.) «Ողոգումեանն մեծ, որ կոչի բարեբանեալ օր» (օրինակներն՝ ըստ ՆՀԲ-ի): ԱԲ-ն հէնց բացատրում է «ծառզարդար, ծաղկազարդ»:

Սա Զատիկին նախորդող շաբաթուայ տօնն է, որի ժամանակ նորաբողոք ծառերի (գլխաւորապէս՝ ուռնենու) ոստերը եկեղեցում օրհնում են եւ բաժանում հաւատացեալներին:

Որդուկ - նշանակում է ուղղափառ: Ունի միայն Երեմիա Մեղրեցին<sup>43</sup>: Ինչպէս գտնում է Աճառեանը, յունարէն *ὄρδος* (ուղիդ) բառից է:

Որթողքս (օրթողքս) - յունարէն *ὀρθόδοξος* ուղղափառ բառից փոխառեալ, այսինքն՝ ուղղադաւան՝ «ողջամիտ ի հաւատս»: Օրինակ՝ «Եւ ժողովեալ զամենայն իւրոյ իշխանութեանն որթողքս զպիսկոպոսս, զերիցունս, զսարկաւազունս ... եւ մեծ ժողով առ հասարակ իշխանութեանն ժողովեցան»<sup>44</sup>: Ուղղափառից էլ կազմուած է ուղղափառութիւն բառը<sup>45</sup>:

Պառակլիտոս - յուն. *παράκλητος* բառից, որն ունէր պաշտպան եւ մխիթարիչ իմաստները (ԺԹՀՀ, 1242): Գործածուած է իբրեւ վերադիր Սուրբ Հոգուն կապակցու-

43 Երեմիա Մեղրեցի, *Բաղդիք հայոց*, Երեւան, 1975, էջ 258:

44 Փաւստոս Բուզանդացի, *Աշխ.*, էջ 75:

45 Ուղղափառութիւնը քրիստոնէական հիմնական ուղղութիւններից է: Հոմեական կայսրութեան բաժանումից յետոյ քրիստոնէական եկեղեցին բաժանուել է երկու՝ հոմեական եւ յունական մասերի: 1054 թ. հոմեական եկեղեցին կոչուեց կաթողիկէ, իսկ քիզանդական եկեղեցին՝ ուղղափառ: Ուղղափառութեան զարգացման ընթացքում առաջացել են 15 ինքնագլուխ եկեղեցիներ՝ Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղէմի, ռուսական, վրացական, սերբական, ռումինական, բուլղարական, լեհական, չեխական, ալբանական, ամերիկեան, Կիպրոսի, յունական (ՀՍՀ, Երեւան, 1986, հտ. 12, էջ 244):

42 Հայաստանեայց եկեղեցում միտոնի կիրարկումը գալիս է առաքելական ժամանակներից: Աւանդութեան համաձայն՝ միտոնը օրհնել է Գրիգոր Լուսաւորիչը Ս. Էջմիածնում. այն փոխանցուել է սերնդէտերունդ: Միտոնօրհնէքի ընթացքում հին միտոնը խառնուել է նորին: Միտոնօրհնութեան ծէսը կատարուել է 5-7 տարին մէկ:

թեան: Գործածուած է Ղեւոնդ Մեծի մօտ (Ը դար): Ղեւոնդ վարդապետի մօտ նախադասութիւնը հետեւեալն է. «...Վասն որոյ եւ Տէրն յորժամ կատարեաց զամենայն յառաջագոյն սահմանեալս իւր, զորս ի ձեռն մարգարէիցն խօսեցաւ նախ քան զառնուլն մարմին, եւ գիտեցեալ եթէ մարդիկ են կարօտ օգնականութեանն Աստուծոյ՝ խոստացաւ նոցա առաքել զՀոգին Սուրբ պառակլիտոս կոչեցեալ, այսինքն մխիթարիչ»<sup>46</sup> (ընդգծուածը մերն է - Ս. Պ.): Ղեւոնդ վարդապետը ինքն էլ բացատրում է բառը՝ մխիթարիչ: Բառը չկայ ՆՀԲ-ում:

Պառաւատոս - յունարէն *παράβατος* բառից, որ նշանակում էր ուխտադրուած: ՆՀԲ-ն բացատրում է՝ «օրինազանց, ուխտադրուած, ուրացող, յանցաւոր» (ՆՀԲ, 2, 600): Գործածուած է որպէս մակրիւր Յուլիանոս կայսրի՝ «զպիղծն Յուլիանոս պառաւատոս», «յանցաւորն Յուլիանոս՝ կոչեցեալն պառաւատոս»:

Պեմտեկոստէ (պեմտակոստէ, պեմտակոս, պեմդակոստեայ, պեմդակոստէ) - փոխառութիւն է յունարէն *πεντηκοστή* հոգեգալուստ բառից: Ըստ Զահուկեանի՝ բառը հայերէնին անցել է նախազբային շրջանից (Զահուկեան, 619):

Բառը հայերէնում բացատրուած է՝

1. Հրեաների՝ Եգիպտոսից դուրս գալու յիսուներորդ օրը. «Երբ կատարեցին Պենտեկոստէի տօնը, նրանք յարձակուեցին Գորգիասի վրայ, որը եգիպտացիների կողմի կուսակալն էր (Բ. Մակ., ԺԲ 32):

2. Հոգեգալուստ, որ Զատիկից 50 օր յետոյ է գալիս. «Բայց այժմ լինիմ յեփեսոս մինչեւ ց Պենտեկոստէ» (Ա. Կոր., ԺԶ 8):

3. Զատիկից մինչեւ Հոգեգալուստ եղած 50 օրուայ ընթացքը. «Եւ ի կատարել

46 Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 59:

աւուրցն Պենտեկոստէից էին ամենեքեան միաբան ի միասին» (Գործ. Բ 1):

Հայերէնում գործածուած է Հոգեգալուստ բառը:

Պոռաւթեոս - յունարէն *προσει ο θεος* «Մերձեցի՛ր, ով Աստուած», որին հայերէնում համապատասխանում է «Ասէ Աստուած» արտայայտութիւնը (ՀԱԲ, 109): Պատարագի ընթացքում սարկաւազը դիմում է ժողովրդին՝ «Երկիւղածութեամբ լուարուք սրբոյ աւետարանին»: Ժողովուրդը պատասխանում է՝ Պոստթէոս (Պտրգ. 563), այսինքն՝ «Մօտեցի՛ր, Աստուած»:

Պոստթեմէ (պոստթեմէ) - յունարէն *προσχωμεν* ուշադրութիւն դարձնել բայից: Խոսքովի Պատարագամատոյցում բառը բացատրուած է այսպէս. «Աւետարանը եկեղեցում կարգաւ սկսելուց առաջ ասուած բանաձեւերից մինը»<sup>47</sup>: Խոսքովը նոյն Պատարագամատոյցում գրում է. «Պոստթեմէ. բարբառս այս յունական է. ի մերս՝ ունկն դիք կամ ի վեր նայեցէք թարգմանի»<sup>48</sup>: Գրիգոր Տաթեւացին (ԺԴ դ.) մեկնում է. «Պոստթեմէ, այսինքն ի վեր նայեցէք յաւետարանս սուրբ, զոր դոքա երգեցին»<sup>49</sup>: Տաչեանի Պատարագամատոյցում կայ հետեւեալ նախադասութիւնը. «...ի կատարումն շարականին բարձրացուցանէ զաւետարանն սուրբ եւ ձայնէ. Պառակլուածն է: Ժողովուրդն ասեն՝ զսուրբ Աստուածն»<sup>50</sup>: ԱԲ-ի բացատրութեամբ՝ «Ուշ դնենք, մտիկ ընենք»:

Պրոմիազմեանոս - յունարէն *προμηγιασμένος* բառից, որ հին յունարէնում ունէր սկզբնական, նախնական իմաստը (ԺԹՀՀ,

47 Խոսքովու Անձեացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից Պատարագին, Վենետիկ, 1869, էջ 154:

48 Նոյն տեղում, էջ 55:

49 Գր. Տաթեւացի, *Ամարան հատոր*, Կ.Պոլիս, 1741, էջ 153:

50 Սրբազան պատարագամատոյցը, էջ 504:

1381): Բառը նշՐ-ում վկայուած է: Այս բառը գործածուած էին կաթողիկէ հայերը: Հայերէն թարգմանուել է «նախարրելոց պատարագ» (կատարուում էր Մեծ Պահքի ժամանակ):

Սիւնրուոն - յունարէն *συμβολή* (լատիներէն *symbolum*) հանգանակ, հաւատոյ հանգանակ: Ըստ նշՐ-ի՝ «առ մեօք ափ Հանգանակ եւ առ նախնիս՝ նշանակ եւ Դաշն հաւատոյ» (նշՐ, 716): Հաւատոյ հանգանակը (Հաւատամք) քրիստոնէական հաւատի խտացուած բանաձեւումն է:

Սիկիրիէ - յունարէն *σικυριε* բառացի նշանակում է քե՛զ, Տե՛ր: Մեկնուած է Տաշեանի «Պատարագամատոյցում»: Երկխօսութիւնը հետեւեալն է. «Սարկաւագ - զժամ պատարագիս եւ զառաջիկայ աւրս խաղաղութեամբ եւ առանց մեղաց կատարել, ի Տեառնէ խնդրեսցուք: Ժողովուրդ - Շնորհեա, Տէ՛ր, կամ սի կիրիէ»<sup>51</sup>:

Սկետիոն - յունարէն *σκειναριος* բառից, որ յունարէնում ունէր կահոյք, իր եւ հագուստ իմաստները (ԺԹՂՂ, 1480): Իմաստափոխութեամբ ստացել է արկղ իմաստը: Հայերէնում այն ունի խաչը պարունակող արկղ իմաստը: Բառի ծագմանն անդրադարձել են Ղ. Ալիշանը, Ն. Մառը: Ղ. Ալիշանը «Հայապատում»-ում գրում է. «Յայնժամ հրամայեաց արքայն բերել զնշան խաչին եւ բացեալ զարկղն ուր կայր փայտն՝ ի սկեւոնն ոսկի, եւ եղեալ դանակ ի նմա կնքեաց զնա մատանեաւ արքունի»<sup>52</sup>: Ալիշանը տողատակում էլ բացատրում է սկետիոն բառը պահարան՝ համապատասխան յունարէն ձեւից: Արկղում պահուել են սրբերի նշխարներ: Աճառեանը եւս բառը համարում է յունարէն փոխառութիւն (ՀԱԲ, 4, 229): Սկետիոն արմատից է Սկեւոյ վանքի անուանումը, ո-

րը խոշոր գիտամշակութային կենտրոն էր Կիլիկեան Հայաստանում: Այնտեղ է եղել Հեթումեանների տոհմային դամբարանը:

Սոֆիա ութիւ - կապակցութիւնը յունարէն համապատասխան *σοφια ορθοι* արտայայտութիւնից է, որ նշանակում է «ուղիղ եւ իմաստութեամբ կանգնած» (ԺԹՂՂ, 1490): Հայերէնում գործածուած է Տաշեանի «Սրբազան պատարագամատոյցք հայոց»-ում: Նախադասութիւնը հետեւեալն է. «Եւ զինի Սարկաւագն. Իմաստութեամբ աւուրիւ սոֆիա»<sup>53</sup>:

Սքեմ - կրօնաւորի հագուստ, տարագ: Փոխառութիւն է յունարէն *σχημα* ձեւ, տարագ բառից: Այս բառից կազմուած էին սքեմաձեւ, սքեմարկէք, սքեմաւոր, սքեմաւորութիւն բառերը: Ըստ նշՐ-ի՝ «զգեստ. մանաւանդ ձեւ կրօնաւորական» (նշՐ, 2, 768):

Տաքտիկոն - յունարէն *τακτικόν* դասաւորութիւն բառից փոխառեալ: Ըստ Հ. Աճառեանի՝ հայերէնում գործածուած է երկու անգամ: ՆշՐ-ն բառը տալիս է տաքտիկոն տարբերակով եւ յղում տիպիկոն բառին՝ գտնելով, որ տաքտիկոն ձեւը վրիպակ է: Ստ. Մալխասեանցը բացատրում է. «դասաւորութիւն, կարգաւորութիւն (եկեղեցական) աթոռների» (ՀԲԲ, 4, 394): Օր.՝ «Եւ ի տաքտիկոնն, յորում կարգ եպիսկոպոսացն սահմանի, գրեալ է, որ հայոց կաթողիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի» (Ն. Լամբրոնացուոյ Ատենաբանութիւն. Պատասխանի Ոսկան արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք, 24):

Տիփտիկոն - փոխառութիւն է յունարէն *βιπτυκον* բառից, որը յունարէնում ունէր գոյգ, երկակի, երկձալ նշանակութիւնը (ԺԹՂՂ, 412): Ըստ նշՐ-ի՝ «Ցուցակ անուանց երկիջեան կամ երկձալ ի յիշատակ աւագութեանց եւ վասն յիշելոյ ի պատարագի» (նշՐ, 2, 879), ըստ Մալխասեանցի՝ «Երկձալ ցուցակ, որի վրայ վանքերում

51 Նոյն տեղում, էջ 370:  
52 Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւն հայոց, Վեներտիկ, ի վասն Ս. Ղազարու, էջ 222:

53 Սրբազան պատարագամատոյցք, էջ 361:

կամ եկեղեցիներում նշանակում էին եպիսկոպոսների կամ բարերարների անունները՝ պատարագի ժամանակ յիշելու համար» (ՀԲԲ, 4, 447): Բառը գործածուած է Ն. Լամբրոնացու «Պատասխանի Ոսկան արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք»-ում (Երուսաղէմ, 1842):

Փասեակ (փեսեկ) - սա յունարէն *φασέκ* բառից է տառադարձուած. յունարէնը իր հերթին բառը փոխառել է եբրայերէն *pesax* «զատիկ. պասեք Հրէից» բառից: Այս բառի մասին կը խօսուի եբրայական փոխառութիւնների մէջ:

Քրիայ - բառը կայ միայն Երեմիա Մեղրեցու բառարանում, որում բացատրուում է «յիշատակ Տեառն»: Փոխառութիւն է յունարէն *χρεία* բառից, որը յունարէնում բազմիմաստ էր. ունէր գործածութիւն, օգուտ, շահ, գործողութիւն, յարաբերութիւն իմաստները (Մեղրեցի, 336):

**ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆԿ**

ԱԲ - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1865:  
Ալիշան - Ղ. Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Երեւան, 2002 (գրական արեւելահայերէնի վերածեց Վ. Գ. Բարսեղեանը):  
ԱՀԲԲ - Է. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հտ. 1-2, Երեւան, 1976-1978:  
ԲՍԳ - Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:  
Բուզանդ - Փաւստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:  
Եզնիկ - Եզնկայ Կողբացու Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վեներտիկ, 1826:

Եղիշէ - Եղիշէի վասն վարդանայ եւ հայոց պատերազմի, Երեւան, 1957:  
Խորենացի - Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:  
ՀԱ - Հանդէս Ամսօրեայ:  
ՀԱԲ - Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա-Դ, Երեւան, 1971-1979:  
ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944-1945:  
ՀԼԲԲ - Հայոց լեզուի բարբառային բառարան, հտ. Ա, Երեւան, 2001:  
ՀԼՊ - Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Ա-Բ, 1940-1951:  
ՀՀԲ - Բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1749:  
Մեղրեցի - Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Երեւան, 1975:  
ՄՀԲ - Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. 1-2, Երեւան, 1987-1992:  
Յովհաննիսեան - Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառապաշարը (V դ.), Երեւան, 2006:  
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1836-1837:  
ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդէս:  
Պտրգ. - Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Յ. Գաթրճեան եւ Տաշեան, Վիեննա, 1897:  
Ջահուկեան - Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Ասխազարային ժամանակաշրջան, Երեւան, 1987:  
Փարպեցի - Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:  
ԲՀ - Գրիստոնէայ Հայաստան (հանրագիտարան), Երեւան, 2002:  
ՃԲՐԸ - Древнегереческо-русский словарь, Москва, 1958: